

ցուցնէին . չորս տեսակ թուղթերը տարւոյն չորս եղանակները կը նշանա- կէին , և յիսուռնուերկու հատ թղթերն ալ տարւոյն յիսուռնուերկու շաբաթնե- րուն նշանն էին : Բայց աս կարծիքը հա- ւանական չէ . վասն զի յոյն և լատին հին հեղինակները՝ որ շատ տեսակ խաղերու վրայ յիշատակութիւն կ'ընեն , թղթի խաղը ամենեւին չեն յիշեր՝ թէ երբ և ինչ բանի համար հնարուած ըլլայ :

ԺԴ դարէն վերջը կը սկսի մատե- նագրաց մէջ խաղի թղթին յիշատա- կութիւնը , որոնցմէ ոմանք Խտալիայի մէջ գտնուած է կ'ըսեն , ոմանք Վեր- մանիոյ մէջ , ոմանք ալ Սպանիայի մէջ . բայց ամենէն հաւանականն է որ Վաղ- ղիոյ մէջ կարողոս էին ժամանակը հնա- րուեցաւ , աս թագաւորը զբաղեցընելու համար իր խելացնորութեանը ատեն . թէպէտ ոմանք ալ Զ կարողոսին ատեն հնարուած է կ'ըսեն անոր կրէնկոնէօր յաբբմէն պատկերածախին ձեռքով 1362ին :

Թղթերուն չորս տեսակը և պատ- կերները նշանակութիւններ ունին , բայց անուննին ամէն ազգ նոյնպէս չանուաներ . ընդհանրապէս պատե- րազմական բաներու նշան են . տիգա- ձեւը և քառակուսին (մաչա , օրիա) յայտնապէս կը ցուցնեն զէնքերու ձե- ւեր , անոր համար զէնքի անուններ ու- նին ¹ . սրտաձեւը (քուփա) զինուորա- կան քաջասրտութիւնը կը ցուցնէ . ա- ուոյտը (սիաթի) պատերազմի դաշ- տին նշան է , կամ զօրաց պաշարոյ . կամ թէ թրի կոթի ձև է : Չորս թագա- ւորներն (թահլը) կը սեպուին Վա- ւիթ , Բքեքսանդր , կեսար և Սեծն կարողոս . չորս թագուհիներն կամ աղ- ջիկներն՝ Պալլաս կամ Բթենաս դից- ուհին , Բրթին ² , Յուդիթ և Հու- քել . չորս արբանեակներուն (պաճաք) անուններն են Հեկտոր , Լանսլոյ ³ , Ը- ժիէ ⁴ և Լահիր ⁵ : Բն անունները հին

ու նոր ատենի երևելի թագաւորաց և իշխանաւորաց անուններն են . որոնց տակ կ'իմացուէին կարողոսի ատեն ե- ղած անձինք , կամ Վաղղիոյ մէջ նշա- նաւոր անձինք . զոր օրինակ Բրթինը կ'իմացընէր՝ է կարողոսի կինը Սա- րիամ Բնթու . Պալլասը՝ Յոհաննա Բքեան Վաղղիոյ սրբազան դիւցազն- ուհին . Յուդիթը՝ Զ կարողոսի կինը Իզապելլա Պաւերացի , Սաքելը՝ Բք- նէս Սորել՝ որ կարողոսի արքունեացը մէջ անուանի խաթուն մ'էր : Բքա- նեակները կը նշանակէին Սիջին դա- րու ասպետները , որ ասպետ չեղած արբանեակ կամ փոքրաւոր կ'ըսուէին , և ասպետաց ու տիկնաց ծառայու- թիւն կ'ընէին : Պատկերաւոր թղթերուն Վաղղիացիք Գլուփ ⁶ կ'ըսեն , անպատ- կերներուն՝ Կէր ⁷ . կէտերը առանձին աններով 1^{էն} ինչուան 10 ^{աս} կ'ըսուին , լատին բառէ առնուած որ պզտիկ ստակ մը կը նշանակէ :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ

Բնանց Բժշկի առողջութիւն :

ՈՐՈՎՏԵՏԵՒ մարդկային կեանքը պահելու զխաւոր և առաջին պատճառ- ներէն մէկը սեպուած է օդը , ով որ կ'ու- զէ առանց բժշկի կարօտ ըլլալու՝ իր օ- րերը առողջութեամբ անցընել , պէտք է որ նախ ջանայ մաքուր օդով տեղ բնակիլ . գերեզմանոցներէ , հոտած ջրերէ ու աղբանոցներէ հեռու բոլորու- վին . որոնք միշտ օդը կ'ապականեն , Իսկ ամէն օրուան առաւօտեան օդն ալ որովհետեւ խիստ առողջարար է , շատ հարկաւոր է որ մարդ կանուխկէկ ել- լելով ան օդն ալ քիչ մը շնչէ : Բայց երբոր մէկը գոց դռնով և պատուհան- ներով սենեկի մէջ նստած է՝ պէտք է աղէկ զգուշանայ որ դրսէն փչած քա-

1 Գաղ . Pique, Carreau, Cœur, Trèfle.
2 Argine որ Regina Ռեգինա բառին գրերով ձևացած անուն է և թագուհի կը նշանակէ :
3 Lancelot. 4 Ogier. 5 La Hire.

1 Têtes. 2 Points. 3 As.

մին՝ թէպէտ և ամենաբարակ ծակէ աւրլայ, չգպչի իրեն, որ շատ փաստակար է, ինչպէս նաև քրտնած ատեն հովի մէջ կենալը: Իսկ տներու կողմանէ, ան տեսակ տները աւելի բնակութեան համար ընտրելի են որոնց որ պատուհանները աւելի դէպ 'ի արևելք բացուած ըլլան. բաց անկէ պէտք է չոր օդերուն՝ ամէն պատուհաններն ալ մէյմը բանալ, որ լաւ մը հովահարութիւն տանը թէ՛ մէջի թացութիւնը չորնայ և թէ աղէկ և կամ գէշ հոտերն ալ դուրս ելլեն, որ երկուքն ալ միշտ փաստակար են. նորաշէն կամ նոր կիրտուած և չիչորցած տեղ բնակիլն ալ շատ փաստակար բան է, նոյնպէս պառկելու սենեակներուն մէջ պէտք չէ ամենևին ոչ ծաղիկ և ոչ կենդանի պահել, և այսպիսի տեղուանք պէտք է դարձեալ որ միշտ զով պահուին, ու գրւխիբաց պառկիլը խիստ աւողջարար բան է:

Վունի միջոցը պէտք է կարգաւորել իւրաքանչիւր մարդուն աշխատութեանը համեմատ. անոնք որ իրենց կենաց մեծ մասը քնով կ'անցընեն, կամ չափազանց քնոտ են, ոչ երբէք ինչուան ծեղութիւն կրնան ապրիլ, և իրենց անսակաւ ժամանակեայ կենացը մէջն ալ միշտ թմրած ու աշխատանքէ փախչող, ծոյլ մարդիկ կ'ըլլան: Բայն մարդ պէտք է աղէկ միտքը դնէ աս անտարակուսելի ճշմարտութիւնը, թէ անուշ և քաղցր բունին պատճառը միայն հանգիստ խղճմտանք ու աշխատութիւնն է:

Օգետեղէնի կողմանէ՝ ով որ պրկտրկուց 'ի վեր շատ զգեստ հաղնելու սովորութիւն ունեցեր է, պէտք է որ այնպիսին հասակը առած ատեն իր սովորութիւնը պահէ, մանաւանդ թէ աւելցնէ քան թէ պակսեցնէ: Ինչ հանրապէս պէտք է որ զգեստը աւելի լայնկէկ քան թէ նեղ ըլլայ, գրւխը թեթեւ բանով մը գոցած, ոտքերը միշտ չոր ու տաք, և ճերմակեղէններն ալ պէտք է ստէպ փոխել: Եսելուն պէս, հարկ չկայ մէկէն կրակ վառել. աւելի լաւ է քայել, վազել, աշխատիլ որ կրա-

կին տաքութենէն աւելի՝ օգտակար են բոլոր մարմնոյն: Արչափ որ աւողջ մնալու համար հարկաւոր է որ մարդ մաքուր տեղ բնակի և ամէն բան մաքուր պահէ, այնչափ և աւելի հարկաւոր է որ ջանայ ինքզինքը մաքուր պահել. երեսը ու ձեռուները շատ անգամ օրուան մէջ պէտք է լուանալ, ձմեռուան մէջ ալ քանի մը անգամ գաղջ ջրով ամբողջ մարմինը լուանալը շատ աղէկ և օգտակար բան է. իսկ ամառը ծովու կամ գետի մէջ շատ անգամ լուացուիլը թէ՛ աւողջարար և թէ՛ հարկաւոր բան է, մանաւանդ խիստ տաք եղած ժամանակներ, որով կը զովանան մարդուն ջղերն ու մարմինը: Իսկ ծով մտնելու ամենայարմար ատենը՝ հաստատուն և պարզ օրերուն մէջ ամենէն տաք եղանակն է. պէտք է անօթի փորանց ծով մտնել, և ելելու ատենն ալ շուտով և աղէկ չորցնել վրան:

Աւելեաց մէջ ինչպէս որ շատ բժիշկներ ալ կ'ըսեն, շատ անգամ շատակերութիւնը աւելի փնաս կ'ընէ քան թէ շատ տեսակ բայց չափաւոր ուտելը: Ասան զի չափաւոր ուտող մարդ մը, միշտ զուարթ և արագաշարժ ալ կ'ըլլայ, իսկ շատակերը տարտամ և անհանգիստ կեանք մը կ'ունենայ, որուն վրայէն չեն պակսիր շատ տեսակ հիւանդութիւններ ալ որ վերջը շուտով մահուան դուռը կը հասցընեն այնպիսին:

Ով որ չափաւորեալ կեանք մը ունենալով ստամոքսը չճանրացըններ, ոչ երբէք ան մարդը կը հիւանդանայ կ'ըսէ մէկ երևելի բժիշկ մը: Բաց ասկէ պէտք է որ մարդ ամէն օր նոյն որոշեալ ժամանակին մէջ ուտէ իր կերակուրը, և ան ալ չէ թէ իբրև կարգ հապա անօթութիւն զգալուն պատճառաւ, վասն զի կուշտ փորով կերակուրի նստիլը միշտ փաստակար բան է: Ենչպէս զգուշանալու է որ կերածը հոտած չըլլայ, տհաս պտուղներ չըլլան, գէշ խմորով շինուած չըլլայ հացը:

Իմպելեաց կողմանէ ալ պէտք չէ երկու իրեք տեսակ ոգիաւոր սաստիկ ըմ-

պելիքներ իրարու խառնելով խմել, այլ զուտ բայց քիչ խմելու է : Աղեքսանդր Սակեղոսացին կ'ըսէր . « Այս երկու ճարտար խոհակեր ունիմ » այսինքն շարժմունք և բարեխառնութիւն . « Այլ իրացրնէ ինքն ալ երբոր բարեխառնութիւնը կորսրնցուց՝ կեանքն ալ կորսրնցուց : (Թէ որ կ'ուզես որ կերածդ աղէկ և շուտով մարսես՝ նախ նայէ որ առանց շտապելու լաւ մը ծամես ու ետքը կըլլես, և երբ սեղանէն կ'ելլես՝ նախ մէկ չափաւոր շարժմունք մը ընելով՝ վերջը նստէ դարձեալ քու արհեստիդ կամ կարգալուդ :

Կերակուր եփելու հարկաւոր եղած գործիքներն ալ պէտք է որ միշտ մաքուր պահուին, և կլայեկելու կարօտութիւն ունեցող ամանները պէտք չէ այնպէս թողուլ ու գործածել, ուսկից մեծամեծ վտանգներ պատահած են ու կը պատահին շատ անգամ :

Բմպելեաց մէջ ամենէն առողջարարն է մաքուր, պաղ, անհոտ ու անգոյն ջուրն, և ազբիւրներուն ջրերը գուբելու՝ ջրերէն շատ աւելի ընտրելի են, բայց քրտնած ատեն ամենեւին պէտք չէ ջուր խմել, իսկ թէ որ մէկը նոյն ատեն նորէն պիտի քրտնի՝ կրնայ խմել միայն թէ շուտով սկսի դարձեալ իր ախատանքը : Ամառը ջրին մէջ քանի մը կաթիլ քացախ կամ լեմոնի ջուր կաթեցրնեն լաւ է աւելի զովանալու համար :

Տղոց ոչ երբէք պէտք է գինի խմցրնել . իսկ օղի կամ ասոր նման ոգեղէն ըմպելիքներ՝ թէ տղոց և թէ մեծերու գրեթէ թոյն են, որ մարդուս կեանքը կը կարճեցրնեն : Այս անոնք որ իրենք զիրենք բողբոլին խումի տուած են՝ թէ առողջութիւննին և թէ համարմունքնին կը կորսրնցրնեն, և միշտ մարդկային ընկերութեան ատելի ըլլալով, քստմնելի և պժգալի են ամէն ատեն ու ամէն խելացի մարդկանց :


Արբոր մէկը թեթեւ տկարութիւն մը սկսի զգալ, պէտք է նոյն օրը սովորականէն աւելի հանգիստ անցրնէ, կերակուր քիչ ուտէ, և ջուր շատ կեկ խմէ : Տիւնուէն անունով գաղղիացի երեւելի բժիշկը մեռնելու ատենը կ'ըսէր . « Այս կը մեռնիմ, բայց կը թողում իմ տեղս երկու երեւելի յաջորդներ, որ են սակաւակերութիւն և ջուր » : Այս փորձուած բան է որ աս երկուքովս շատ անգամ ամէն թեթեւ տկարութիւններն ալ կ'անցնին : Արձեալ պէտք է զգուշանալ ստէպ ստէպ դեղ աննելէն որ դեղերու ծառայ չըլլայ մարդ :

1 Ստեղծ :

Բայց ծանր տկարութեան ատեն գիտուն բժիշկներու խորհրդակցել միշտ գովելի եղած է . աս բանիս համար պէտք է ընտրել փորձ ու տեղեակ բժիշկ մը, և անկէ վերջը չտարակուսիլ անոր վրայ : Բաց աս ալ լաւ պէտք է գիտնալ որ քաջասրտութիւնը և հիւանդութեանը սիրով համբերելը շատ զօրաւոր դեղեր են մարդուս, որ չէ թէ միայն քաջած ցաւերը կը թեթեւցրնեն, հապանակ շատ կ'օգնեն առողջանալուն ալ :

Սէկ խօսքով, թէ որ կ'ուզես և կը փափագիս լաւ և առողջ ըլլալ, պէտք է որ միշտ բարեխառն և ուրախ կեանք մը ունենաս, վասն զի տրտմութիւն, հոգ, բարկութիւն, մաղձոտութիւն, անժուժկալութիւն և ուրիշ ամէն սաստիկ կրքեր կրնան մեծ վնաս բերել մարդուս գլխուն :

Որչափ տեսակ հիւանդութիւններէ ազատ կ'ըլլային մարդիկ թէ որ այսչափ զանազան մոլութիւններ չգտնուէին աշխարհքիս վրայ :



ՕՒՏԱԿԱՐ ԳՒՒՏԵՐ

Աղէի սոսնիլ՝ գէշ սոսնիլէն շատելա կերպը :

ԱՐԲՈՐ կ'ուզես սունկը ուտելու համար գործածել, հասարակ ճերմակ սոխ մը առ ու կեղևները վրայէն հանելով՝ կէսը կտրէ և սունկերուն հետ մէկ-

1 Ստեղծ :